

լով անմարդկային, որոնք արտաքինացիների մէջ մնում են նստածների ու պատերի վրա և այլն:

Բացի անմարդկային արտաքինացիների անմիջական սպանիչ ազդեցությունը մանուկների վրա, նա գուցէ մի առիթ է ևս մեծ քանակի դուրս գալու ևս թողնելու մասին կազմակերպելու վրա իր թունամորթի գործադուրդներով, իր խեղդող դադարով:

Մեր ծխական դպրոցներից ոչ մէկը չունի այսօր առողջապահական բոլոր պահանջներին բավականութիւն տուող արտաքինացիներ, և մեր թեմական տեսուչները ու դպրոցների ղեկավարները, ի հարկէ, երբեք այնպիսի չեն նստածացել, որ մի աչքը դնեն այն կեղտոտ տեղերը: Միայն զիտակցական և բարեխղճ վերաբերում գէպի իրանց ստանձնած արքայան դործը, միայն անշահախնդիր սէրը գէպի մեր ուսումնարանների անմիջ զոհերը՝ կարող էր իջեցնել իրանց բարձրութիւններից մեր անհոգ հոգաբարձուներին և ոչինչ չը տեսնող տեսուչներին...

Մի հնչող հասկանալի սկզբունք պիտի տրեք արտաքինացիներում. նրանք այնպէս պէտք է չլինեն, որ արտաքինացիները բացօթեայ չը մնան: Տեխնիկական մի շարք ցուցմունքներ է տալիս այս պահանջը լրացնելու համար թէ հորի թէ նստարանների և թէ յատակի վերաբերմամբ: Մենք չենք կարող մանրամասն դադարել տեխնիկայով, կասենք միայն որ յատակը պիտի ցնամեն տակաւ և անփախ լինի, պատերը նոյնպէս ցնամնոտով ստեղծած (քոնկրետի մասը), կամ ձիթաներով ներկած, որ փայտէ նստարանատեղերը պէտք է դուրս դնել միանգամայն արտաքինացիներից, քանի որ փայտը ծծում է իր մէջ մէզը և աղտոտութիւնները և վարակման նոր աղբիւր է դառնում, կամ թէ չէ իսկական վատը. կոզեմետիկ շինել: Ամենալաւ, ամենալաւ և հնչող ճարտարական աղտահանիչ նիւթ է և իւրիս է, (ինչպէս այդ ցոյց ենք տուել մեր «Բոլոր» գրքում), անչէլ կիր կարել է դուրս անել կամ չոր, փոշիացրած, կամ ջրի մէջ բաց արած (5 ֆ. կիրը մի վերջը ջրի մէջ), որը յայտնի է կրի կաթ անուամբ: («Բոլոր» էջ 58): Աւելի ևս ապահովութեան համար, արտաքինացիները պիտի անհրաժեշտաբար աւելանա ևս առաջին օրը փոխուի թիւ 1-ին ունենան և այնպիսի տեղ լինեն շինած, որ հոտերը ու զազերը չը մտնեն դասարանները և այլն: Արտաքինացիներ վերաբերելով բազմաթիւ խնդիրներին մշակումն անկարելի է լրացրական յօդածներում, սակայն այս կարճ տեսութիւնից մեր դպրոցների ղեկավարները գուցէ ըմբռնեն խնդրի մեծ կարեւորութիւնը:

Բժշկապետ Վ. Արծուրի

ԿՐԿԻՆ ՅՈՎՆԱՆՆԱՆ ԳՐԱՐՈՅԻ ԱՌԻԹՈՎ

Մեր լրագրի այս համարում տպւում ենք Յովնանեան դպրոցի տեսուչ պ. ֆ. Վարդանանի նամակը, նոյն օրը ևս մեր, անելով միայն մի աննշան կրճատում:

Մենք կարծում էինք, որ պ. Վարդանան, իբրև բարեխղճ մարդ, հրապարակով կը խոստովանուէր, որ ճշմարիտ է, Յովնանեան դպրոցը այն

չէ, ինչ պէտք է լինէր, բայց այս կամ այն պատճառով ինքն իր խմբով այդքան է միայն կարողացել անել: Դա գոնէ կը լինէր ազնիւ խոստովանութիւն: Սակայն, ընդհակառակն, պ. տեսուչը, առանց խղճահարկելու և տատանվելու, յայտարարում է, որ դպրոցը նախանձելի է, խումբը օրինակելի և ամեն բան կարգին: Եթէ դա անկեղծ համոզմունք է, կը նշանակէ Յովնանեան դպրոցի տեսուչը ընկել է մեծ ինքնախաբէութեան մէջ: Մենք կաշխատենք հանել նրան այդ ինքնախաբէութիւնից: Լսեցէք ուրեմն:

Եթէ պ. Վարդանան կարծում է, որ դպրոցի բարձր վիճակը և խմբի լաւութիւնը կայանում է նրանում, որ դասերը սկսվում են կանոնաւոր 8 ժամին, վերջանում 2-ին, վարժակիները յաճախում են դասերին, աշակերտութիւնն ունեն յիշատակարաններ, ուսուցչական սենեակում դրած են մատնաներ, դասացուցակներ, և այլն: Ել այդ բոլորը տեսնելով՝ դոհուհուկութիւն է յայտնում, նա պէտք է խմանայ, որ այդ նոյն բարձր վիճակի մէջ են գտնվում և թիֆլիսի բոլոր օրիորդական-ծխական դպրոցները, որոնց տարեկան բնութեւնը երկու-երեք կամ չորս հազարից չէ անցնում:

Բայց մի դպրոց, որ ունի տարեկան քսան-քսան հինգ հազար եկամուտ, նա չը պէտք է իրան համեմատեթ թաղական մի աղքատ դպրոցի հետ, այլ պէտք է իր ծախսած փողը համեմատել արդիւնք տալ:

1) Յովնանեան դպրոցն ունի մօտ 260 աշակերտուհի, և ամեն տարի սեպտեմբերին ահագին թիւով երեխաներ չեն ընդունվում, պատճառաբանելով թէ տեղ չը կայ: Մտածում էք միթէ, որ մենք ունենք ուրիշ դպրոցներ, նոյն իսկ գաւառներում, որոնք տարեկան 5 կամ 7 հազար բնութեւնով 300, նոյն իսկ չորս հարիւր երեխաներ են կրթում:

Հարցնում ենք, ինչ միջոցներ են դիմել, ինչ են արել, որ կարողանաք ձեր դուռը երկու երեխաներին յետ չը դարձնելու: Ոչինչ:

2) Ունենալով տարեկան 20—25 հազար եկամուտ, Յովնանեան դպրոցը պէտք է բոլոր աշակերտութիւններին ձեր ընդունելի, ինչպէս մի հիմնարկութիւն, որը հիմնված է բուն բարեգործական նպատակով: Բայց դա փոխարէն այդ դպրոցի վարչութիւնը շատերից թողալ է վերցնում 27 բուրձ: Այդպիսով ուրեմն աղքատ երեխաները, որոնք ամենից աւելի իրաւունք ունեն անդ դասելու Յովնանեան դպրոցում, դուրս են մնում և գրկվում են, և այնտեղ ընդունվում են նրանք, որոնք կարող են վճարել տարեկան մօտ 30 բուրձ: Ով կարող է համարձակվել ասելու, որ այդ համապատասխան է հիմնարկի նպատակին և դպրոցի կոչման: Ոչ ոք:

Հարցնում ենք, ինչ են արել այդ տխուր երեւոյթի առաջին աստիճան: Ոչինչ:

3) Տարեկան 20—25 հազար եկամուտ ունեցող դպրոցը համարձակ կարող էր հրաբխի իրանց առարկաների մէջ հմուտ, նոյն իսկ բարձր կրթութիւն ունեցող մանկավարժ դասաւարտներ: Սակայն երբ են արել այդպիսի փորձ: Երբեք: Եւ այդ դպրոցում, ընդհակառակն, ոչ թէ առարկաների համեմատ են դասաւարտներ հրաբխիւմ, այլ արեւնաձեւոյթ յանձնաժողովը: Եւ այդպիսի յիշուհ երկու հազար ստորագրութեամբ մի առաջարկութիւն յանձնվեց այդ յանձնաժողովի միջոցով դաշնակցական խորհրդին: Այդ առաջարկութիւնը կը քննվի ազգային ժողովի առաջկայ նիստերին, որոնք կը բացվին մարտին, այնուհետեւ կառավարվի ժողովրդի քուէարկութեամբ: Թէ ինչ հետեւեք կուենայ այդ ահագին նշանակութիւն ունեցող առաջարկութիւնը, որին սաստիկ ընդդէմ են յետադիմականները, նոյն իսկ արմատական կուսակցութեան մի որոշ մասը, թէ ինչ պատասխան կը տայ չվճարական ազգաբնակչութիւնը այդ մարդասիրական նախաձեռնութեան, դա ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Մի այլ առաջարկութիւն արդէն քննվեց ազգային ժողովի անցեալ նիստերին: Երեւոյ տարվայ մարտի 4-ին ժողովուրդը պիտի յայտնի իր «այդ»-ն կամ ոչը: Այդ առաջարկութիւնը վերաբերում է արհեստավարների դրութեան բարձրացման: Նա հարկադրում է դաշնակցութեան կառավարութիւնը՝ հովանաւոր հանդիսանալ արհեստավարներին, վարձով բանող արհեստավարներին նրանց հասակի, աշխատանքի ժամերի քանակութեան վերաբերեալ հարցերը որոշելու, կարգադրելու:

դէն կաղնիւ խմբի մէջ, նայելով ներքին յարմարութիւններին, բաժանում են առարկաները, այնպէս որ երեկվայ դաստիարակչութիւնը այսօր դառնում է դասատու որ և է առարկայի, և կամ իրաւաբան տեսուչը սկսում է դաս տալ գծագրութիւն: Ինչ կասէք, պ. Վարդանան:

4) Ձեր աշակերտութիւնը, ուսումնարանն աւարտելով, նոյն իսկ հայերէն օրինաւոր խօսել չը գիտեն, ուր մնաց թէ կարգաւ և գրել: Այս է, պ. Վարդանան, ձեր օրինակելի գործունէութիւնը...

Գուցէ կարծում էք, որ տարեկան 25 հազար եկամուտը, որ այժմեանից ձեր ձեռքի տակ է գրված, քիչ է այդպիսի գործունէութեան համար: Եթէ կարծում էք, այն ժամանակ մի քիչ ձեր քիչը հեռու նայեցէք և կը տեսնէք, որ, օրինակ, Վարդապետի թեմական դպրոցը, կամ Երեւանի թեմական դպրոցը, ահագին սեմինարիաներ, 5—6 դասարաններով և երեք պատրաստակներով, տարեկան եկամուտ ունեն ոչ աւելի քան 12 հազար բուրձ: Եւ մենք դաւաճանքում ունենք նոյնպէս երեքսեան օրիորդական դպրոցներ, որոնք մի քանի հարիւր աշակերտութիւն ունեն, բայց նրանց տարեկան եկամուտը 4—6 հազարից չէ անցնում:

Այս, պ. Վարդանան, մենք կարծում ենք, որ մի դպրոց, որը տարեկան 20—25 հազար եկամուտ ունի, որը կարող է իր տեսչին տալ 2,000 բուրձի ուձիկ, առաւ, ծառայ և այլն (այդ պատիւ է բերում դպրոցին) կարող էր և պէտք է ունենար 4—5 հարիւր աշակերտութիւն, բոլորը ձերկավարժ, պէտք է ունենար նոյն իսկ գիշերօթիկներ՝ շատ աղքատ երեխաներից, պէտք է ունենար զուգընթացներ, և դա հետ միասին մի գործունէայ ուսուցչական խումբ, և պէտք է բաց թողնէր փոքր ինչ ուսուցչական աղբիւրներ: Իսկ այդ բոլորը չը կայ: Եւ ահա թէ ինչ հիման վրա մենք ասեցինք, և պնդում ենք, որ պէտք է հանել դպրոցը իր անխախտելի վիճակից և հասցնել արժանաւոր բարձրութեան:

Բ. Տ. Համեստութիւն չէ, որ դուք այդքան գովաբանել ենք թափում ձեր խմբի վրա հրապարակով: Այդ ինչի նման է... դուք գովում էք ձեր հոգեւորական, քանի որ դուք չէք գայ և կը գովէ ձեր: Մոռացել էք հայոց առակը. —մէկը ի վրա լոյս եկաւ, ով տեսաւ՝ գգրը: Այնպէս չէ, պ. տեսուչ:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«Юридическая Газета» լրագիրը իր վերջին համարում մի արտաքին կարգի սարսափելի սպանութեան դէպք է հաղորդում: Այդ անուր եղեւնագործութեան զոհ դնաց խելած քաղաքի (խարկովի) նահանգում) դասարանի անդամ Արցիմովիչ իր ամբողջ ընտանիքով: Ահա եղելով ինչ: Անցեալ զեկտեմբերի 11-ին, գիշեր ժամանակ, ոմն Պրոկոփովի իր ընկեր կողքին հետ մտնում են Արցիմովիչի բնակարանը: Տան աղախինը՝ Մարիա Պրոկոփովայ, որ մտերմական յարաբերութիւն ունէր Պրոկոփովի հետ, նախապէս մարդասպաններին խօսք է տալիս ներս

Պատրաստվում է մի երրորդ առաջարկութիւն: Առաջարկում են կառավարութեան, որ նա իրան վրա վերցնի հիւանդներին ձրի բժշկելու ինամբը՝ բժշկի և զեղորայք մատակարարելու: Դաշնակցութիւնը պիտի իր ձեռքի տակ ունենայ 1225 բժշկի (Իւրաքանչիւր 2,300 բնակիչներին մի բժշկի): Իսկ թէ նա ինչ միջոցներով պիտի ծածկէ այդ ծախսերը, առաջարկում են ծխախոտի մենապատկութիւն (monopole) մօնոպոլ ամբողջ Շվեյցարիայում և այդ մենապատկութեան արդիւնքը յատկացնել կառավարութեան: Այնպէս որ այստեղ կայ երկու առաջարկութիւն՝ ծխախոտի մենապատկութեան և հիւանդներին ձրի խնամելու: Այս առաջարկութիւնը, ինչպէս առհասարակ ամեն մի նորութիւն, ահագին աղմուկ է բարձրացրել յետադիմական բանակում: Ընդդէմ են, խօսք չը կայ, և ծխախոտ վաճառողներն, և գործարանատէրերը: Այս առաջարկութեան նախաձեռնողը կըրկին նոյն սօցիալ-դեմոկրատական կուսակցութիւնն է: Նա արդէն սկսել է իր նախապատրաստական պրօպագանդան թէ լրագիրների միջոցով և թէ զանազան գաղափարութիւններով, ժողովներ և սարքում թէ քաղաքում և թէ գիւղերում: Բանակաւոր երկու կողմին չը արդէն սկսել

թողնելու: Մտնելով Արցիմովիչի առանձնատեղեակը, ուր նա այդ գիշերը քնած է լինում, Պրոկոփովի և կողքին կացնի հարուստներով հանգուցեալ տեղն ու տեղը սպանում են, այդ միջոցին նրա կինը և միակ 7 տարեկան օրդին աղաղակից զարթնելով ննջարանում տեսնում են արդէն առաջակներին իրանց առաջ կանգնած: Մայրը սկսում է աղաչել՝ ինայիլ իր և որդու կեանքը, առաջարկելով առանց աղմուկ հանելու իր ամբողջ կարողութիւնը և հանգստացնելով այդ միջոցին սարսափահար երեխային: Մարդասպանների պահանջը կատարելով՝ տիկին Արցիմովիչը ցոյց է տալիս բանալիներին տեղը, ինքը պատկած մահաճակով վրա՝ բաց է անում նրա մօտ բերած դանձարանը, որից առաջակները առնում են թանգազին իրեղէններ, բանակային արժէթղթեր և փող, սեղանատան պահարանից ամբողջ արծաթեղէնը և հանդերձարանից շորեղէնները:

Այդ անեղաց յետոյ կողքին վազում է խոհանոց, ուր սպանում է խոհարարուհին, իսկ Պրոկոփովի մնում է տիկին Արցիմովիչի մօտ, որի բերանը պինդ երեսբերելով կապում է: Վերադառնալով խոհանոցից, կողքին յանձնում է կացնի Պրոկոփովի, որը փակվելով նրան աղաղակելով մի կտոր քաթանի մէջ՝ անցնում է տիկնոջ գլխի ետեւ և երեք ուժգին հարուածով այնպեւ կում է զոհին: Այդ բոլորից օրդին տեսնելով իր մօր սպանութիւնը՝ կանչում է «մայրիկ», բայց նրա գլխին տեղացող կացնի հարուստները ընդ միշտ խնդում են խեղճի ձայնը:

Սպանութեան ժամանակ Մ. Պրոկոփովայ դըտնելով է խոհանոցում. ոճրագործները իրանց ստակով գործը վերջացնելուց յետոյ լուստում են խոհանոցում իրանց ձեռքերը և հաւաքելով մի կապոցի մէջ յափշտակած իրեղէններ՝ երեք միասին Պրոկոփովայի հետ երկաթուղային գնացքով փախչում են Տաքանիք:

Քիչ ժամանակ անցնելուց յետոյ ոճրագործներին կարանաւորում են և բաւտ ևս նստացնում. մարդասպանները դեռ չառ երկաթաուղ են, Պրոկոփովի 19 տարեկան է, կողքին 20, իսկ Պրոկոփովայ 23 տարեկան:

ՆԱՍՏԱԿ ԽՄԻՍԿՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, յունվարի 26-ին
Վեհափառ Հայրապետի կանխագոյն հաճութեամբ ու հրամանով. ս. էջմիածնի ուսումնարանական վարչական յանձնաժողովի գրութեան համեմատ՝ վիճակային կոնսիստորիան արդէն կարգադրել է մեր եկեղեցական-ծխական դպրոցների համար նոր հոգաբարձական ընտրութիւններ անել, որ և կատարվում են շատ տեղեր:

Արեւմտի, խոնարհաբար խնդրում եմ հաճել թող տալ ինձ «Մշակ»-ի միջոցով հասցնել ի գիտութիւն և ի հրահանգութիւն հայ հասարակութեան և ընտրութիւններին նախադրանք բարձրապատիւ քահանայանքներին, որ ամսիս 15-ին դրած, բայց 25-ին ձեռքս հասած № 8 պաշտօնական թղթով ուսումնարանական յանձնաժողովը բարհսանել է իմ № 558 գրութեամբ խնդրած հարցերին տալ վիճակային կոնսիստորիան և նախաձեռնողներին մէջ: Յետադիմականները, ինչպէս անհուղեք, չեն մըտածում ամբողջ ազգաբնակչութեան շահերի մասին. նրանք ճանաչում են միայն իրանց անձնականը, բայց իրանց անձնականից չեն հոգում ընդհանրութեան մասին: Աչքը առաջ ունենալով իրանց նեղ, եսական շահերը, սկսում են խօսել պոռայ յանուն «ճշմարտութեան», յանուն ընդհանրութեան, յանուն ամբողջ ազգի շահերի...

«Յետադիմականները մի բոլոր անգամ չեն մտածում, գրում է վերոյիշեալ բանակաւոր առիթով մի լրագիր, այն չքաւոր երեխաների մասին, որոնք հարիւր հազարներով ընկնում, մեռնում են հենց առաջին նրանց պատահող հիւանդութիւնից, որովհետեւ նրանց ծնողները անկարող են ձարել ոչ բժշկի և ոչ դարման: Նրանք չեն մտածում ընտանիքների այն ահագին լեղիօն կազմող հայրերի և մայրերի մասին, որոնք մի անգամ անաղիւն ընկած լինելով, երկու կրկնով իրանց բընից մի պատառ վերցնել, բժշկի են դիմում միայն յետին տաղնալի ժամանակ, որ շատ յաճախ արդէն ուշ է լինում...

Ս. Շևեանց

հետեւեալ պատասխան. 1) «Ամենապատիւ Տ. Տեղակալի թղթաւորութեամբ կատարած հոգաբարձական ընտրութիւնները համարել օրինաւոր, եթէ կանոնաւոր են կատարուած, և ընտրողական թերթերն ուղարկել ի հաստատութիւն: 2) Թող է տրուում օրինողական դպրոցները համար հոգաբարձական ընտրել, որոնք ինչպէս յարմար է—խառն տղամարդկանց հետ կամ առանձին:»

Գալով զանազան պաշտօնականերից զբաղողական ինձ արած երկու հարցումներէն, թէ ինչ հրահանգով պէտք է կատարել հոգաբարձական ընտրութիւնները և թէ ո՞րքան պիտի հսկեն ընտրութեան կանոնաւորութեան վրա, պատասխանում եմ. 1) հոգաբարձական նոր ընտրութիւնները համար նոր հրահանգ չը կայ. հետեւեալ պէտք է կատարել հանգուցեալ Մակար կաթողիկոսի սահմանած կարգ ու կանոններով. այն է՝ ընտրութիւններին մասնակցում են միայն եկեղեցու չափահաս ծխականները. ժամաւորները ձայն չունեն. չափահասութեան վերջին տարիքը 25 է: Նախ ծխականների ընդհանուր ժողովից ընտրուում են պատգամաւորներ. ապա՝ պատգամաւորների ժողովից՝ հոգաբարձական: Ծխականների ժողովը վաւերական է, երբ ներկայ է եկեղեցու ցուցակագրուած ծխականների ընդհանուր թւի 1/3 մասը. իսկ պատգամաւորների 3/4 մասը: Եկեղեցու կամ ուսումնարանի կառավարներ վարձով վերցրած կամ դէպի նրանց որ և իցէ պարտաւորութիւն (դաշնաթղթով կամ մտերմակով) ստանձնած ծխականները չեն կարող հոգաբարձու ընտրուել: Չեն կարող ոչ ընտրող և ոչ ընտրելի լինել այն դպրոցի ուսուցիչները, որ դպրոցի համար լինում է ընտրութիւնը (տես կանոնը եկ.—ծխ. ուսումնարանաց հայոց 1889 թ.): 2) Յանձնաժողովի անցեալ թիւականի դեկտեմբերի 16-ի № 55 գրութեամբ թիւական տեսչին է առաջարկուում՝ «հետեւ հոգաբարձական ընտրութիւնների կանոնաւոր կատարման, որոնք կարող է, իսկ որոնք չէ կարող պէտք է հսկեն փոխանորդ կամ գործակալ հայրերը:»

Թեմական տեսուչ՝ Մ. ք. Մեղեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 յունվարի

Ի նկատի ունենալով, որ ներկայ տարվայ փետրվարի 8-ին լրանալու է Պետերբուրգի կայսերական համալսարանի 75-ամեակը, Թիֆլիսում ապրող նրա ուսանողների մէջ միտք ծագեց հաւաքել այդ օրը և ընկերական շրջան կազմելով՝ ընդհանուր սեղանի շուրջը յիշել ուսանողական տարիները և մայրենի համալսարանը և ցանկանալ նրան ապագայում ծաղկել ի փառս ուսուցիչութեան:

Ընկերների յանձնարարութեամբ ստանձնելով կարգադրիչների պարտաւորութիւնները, մենք պատիւ ունենք խնդրել ձեզ, չը մերժել ձեր հրատարակութեան մէջ տպելու ներկայ նամակը, որով մենք դիմում ենք Պետերբուրգի համալսարանի բոլոր նախկին ուսանողներին, թէ աւարտածներին և թէ չաւարտածներին՝ հրաւիրելով նրանց մասնակցել տեղի ունենալի ճաշին:

Մի և նոյն ժամանակ շատ ցանկալի կը լինէր, որ ուրիշ համալսարանների նախկին ուսանողներն ևս միանային ընդհանուր տօնին:

Ա. Ֆրէնկել
Ի. Միլիսին
Վ. Բոգոսլովսկի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 22-ին

«Մշակի» 7-րդ համարում, մի անտորադիր յոգւած կար «Յովնանեան օրիորդաց դպրոցը» վերնագրով:

Այդ յոգւածում ասված է, թէ ա) հոգաբարձական նոր ընտրութիւնը միակ միջոցն է, որով կարելի է կերպարանափոխել դպրոցի այժմեան վիճակը և հանել նրան իր աննախնայելի դրութիւնից:»

Բ) «Մշակի» խմբագրութիւնը յոյս ունէր, թէ պ. փելիպպոս Վարդանանը կարող կը լինի կազմել օրինաւոր ուսուցչական խումբ, կենդանութիւն մտցնել դպրոցի մէջ, և նիւթականապէս ապահով դպրոցը հասցնել արժանաւոր բարձրութեան:»

Գ) Խմբագրութիւնը չայժմ համոզված է, թէ

պ. Վարդանանը, որը իբրեւ թարգմանիչ շատ եւաւանդու է, և իբրեւ ուսուցիչ նոյնպէս կարող է օգտուել լինել մի այնպիսի մեծ դպրոցում, ինչպիսին է Ներսիսեան դպրոցը, միանգամայն իր դերում չէ՝ իբրեւ տեսուչ Յովնանեան օրիորդաց դպրոցի:»

Դ) «Հոգաբարձութիւնը de facto ոչինչ չէր ունենայ անկող, եթէ տեսուչը լինէր գործունակ, ուժեղ մարդ, եթէ նա կազմակերպէր մի լաւ ուսուցչական խումբ, և դրա օգնութեամբ առաջ տանէր գործը: Բայց քանի որ ոչ տեսուչն է իր դերում և ոչ ուսուցչական խումբը, այդ դէպքում հոգաբարձութեան դերը ահագին նշանակութիւն է ստանում, քանի որ նա պէտք է լինի խիստ տեսչի համար, և պէտք է անդադար իր կօնորոշով և արգար պահանջներով ստիպէ ուսուցչական մարմինը գործել՝ փոխանակ թմբեղու, վերահսկողութիւն՝ փոխանակ չինական պատով չըջապատվելու:»

Այդ է յոգւածի բովանդակութիւնը: Թէ ինչ նպատակով է լոյս տեսել «Մշակում» մի այդպիսի յոգւած յատկապէս ամսին 23-ին լինելիք ընտրութիւններից երեք օր առաջ,—այդ շատ պարզ է ամեն մի մտածող թիֆլիսցի հայի համար:

Հասարակութեան բանիսց դասին թողնելով կշռել ձեր լրագրի անկարկներն իմ անձի դէմ, իբրեւ տեսչի, եւ սրբազան պարոգք եմ համարում յայտնել խմբագրութեանը, թէ «Մշակի» նկատողութիւնները Մարիամեան-Յովնանեան դպրոցի ուսուցչական խմբի մասին միանգամայն անհիմն, անճշդ, ուրիմ և անարդար են:—Իմ հինգամեայ տեսչութեան միջոցին շատ և շատ անգամ, թէ հարցաքննութիւնների և թէ ուրիշ ժամանակ, իրանց այցելութեամբ պատիւ են բերել դպրոցին Արիստակէս և հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսները, որպէս մեր հոգաբարձական խորհրդի նախագահներ, կառավարութեան նշանակած վերատեսուչը և տեսուչները, հ. թիւական տեսուչը և քննիչները,—և բոլորն էլ մեկնել են ամենալաւ վկայութիւն և քաջակերիչ շնորհակալութիւն յայտնելով դպրոցին մանկավարժական խմբին: Ել չը յիշեմ քաջամեծի ծնողների ջերմ օրհնութիւնները, որ ամեն օր լսում ենք:

Արդէն լինելուց յետոյ աւելորդ էր պատասխան տալ «Մշակի» յոգւածին. բայց որովհետեւ դա անարդար յարձակում է մի ամբողջ խմբի վրա, ուստի շատ ցանկալի է, որ ցոյց տայիք և ապացուցանէիք, թէ ո՞րքան են արեւօք այն անձերը, որոնք կարող էին աւելի լաւ պաշտօն վարել Մարիամեան-Յովնանեան դպրոցում, քան թէ սրա աննիւթները մտաւոր դարձացման, բարոյական և կրօնական դաստիարակութեան համար հոգւող արտով աշխատող ինչ համեստ և պարտաճանաչ վարժուհիները, երկու հոգեւոր և երեք աշխարհական ուսուցիչները: Իմ խորին համոզմամբ դրանք բոլորն էլ իրանց գործին հմուտ, փորձառու, անձնուէր և լիովին բարեխիղճ անձեր են: Եւ քանի որ «Մշակը» լոկ խօսքերից զատ ոչ մի փաստ առաջ չէ բերում զրանց թերութիւններն ապացուցանելու համար,—դարձեալ կը կրկնեմ, թէ նրա ասածները մեր խմբի մասին աւելի քան անհիմն, անճշդ, ուրիմ և անարդար են:

Տեսուչ Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի՝ ֆ. Վարդանան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՈՒՐ

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը մտադրութիւն ունի, մօտաւորապէս մի ամսից յետոյ՝ այցելել Կովկասի մի քանի քաղաքները: Վեհափառ ցանկութիւն ունի, ի միջի այլոց, այցելել և Նոր-Նախիջան քաղաքը:

Մեզ հաղորդում են Բագուից, որ այնտեղ մի խումբ օրիորդներ հանգանակութիւն են սկսել յօգուած Ալեքսանդրօպոլի, Կարսի և Նոր-Բայազետի սովետականներ: Թող նուիրատուներին ոգևորի այն մարդասիրական զգացմունքը, որ իրանց մի քանի բուրբլին կարող է սովի ճանկերից փրկել մի թրջուած ընտանիք, մի անօգնական սովատանջի,— և այդ զգացմունքից դրդված՝ թող իւրաքանչիւր մարդ շտապէ, առանց բոյլ կորցնելու, օգնութեան հասնել մեր սովեալ եղբայրներին:

Յունվարի 27-ի հայոց ներկայացումը Թատրոն գրաւեց բաւական հասարակութիւն, հաւանօրէն այն պատճառով, որ մուտքի մի մասը պէտք է

յատկացնէր Բագուից Գաթուկեան արձանին: Այդ երեկոյ խաղացին Մօլիերի «Սկապենի արաբները» և «Վարձու կին» վոդևիլը: Ներկայացումը վատ չանցաւ:

Ստացանք Բագուից, պ. պ. Ն. Յարութիւնեանի և Կ. Արիստի միջոցով, հանգանակված 34 ր. հետեւեալ նամակով. «Կարգալով ձեր լրագրի էջերում Նոր-Բայազետի չքաւորների աննախնայելի վիճակի մասին, շտապեցինք ըստ չափու կարողութեան օգնել մեր կարօտ եղբայրակիցներին՝ հանգանակելով 34 բուրբլի, որը ուղարկում ենք ձեզ, խնդրելով որ հասցնէք նպատակին: Մեր խմբագրութիւնը անմիջապէս կարգադրեց այդ գումարը ուղարկել Նոր-Բայազետ, Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան, որպէս զի այդ փողով ալրեր կամ հաց բաժանվի սովեալներին: Այսօր, յունվարի 29-ին, այդ 34 բուրբլին պօստով ուղարկեցինք Նոր-Բայազետ:»

Ինչպէս գիտեն մեր ընթերցողները, Վեհափառ Կաթողիկոսը հրամայել է հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի նախկին կարգադրիչ յանձնաժողովին՝ յանձնել Կովկասի Բարեգործական ընկերութեան խորհրդին ուսուցչական ժողովից մնացած գումարը, որ բժշկապետ Շահպաւրդեանցից ցոյց տուած հաշուով՝ հասնում էր 2250 բուրբլու: Սակայն յանձնաժողովը, որ ամբողջ մի տարի զանազան պատրաստութիւնով յետաձգում էր այդ գումարի յանձնելը, չը նայելով որ գումարը Բարեգործական ընկերութեան յանձնելու կարգադրութիւնը արեւ էր տեղապահ Ներսիս սրբազանը, այլ ևս չը կարողանալով որ և է աւարկութիւն առնել Կաթողիկոսի վճարողական հրամանի դէմ, հրահարաւոր էր գտել այնու ամենայնիւ յանձնել միայն 2000 բուրբլի, պատճառ բերելով թէ Վեհափառ հրամանագրի մէջ յիշված չէ 250 բուրբլու մասին, այլ ասված է՝ յանձնել 2000 բուրբլու մուրհակը: Յանձնաժողովի այդ անհիմն պատճառաբանութեան դէմ խորհուրդը բողոքել էր Վեհափառ Կաթողիկոսին: Այժմ Կաթողիկոսի դիւանատան կողմից եկած մի գրութիւն յայտնում է, որ Վեհափառ հրամայել է բժշկապետ Շահպաւրդեանի անյապող յանձնել խորհրդին մնացորդ 250 բուրբլին:

Յօդուած Գրիգոր Արժրուհու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Աստրախանցի, Յարութիւն Լազարեանից՝ 3 բուրբլի. 2) Բալախանցի, Հայրապետ Մէլեք-Գրիգորեանից՝ 8 ր. (մնաց. բաժ.) 3) Գերբերդից, Ա. Շահիջանեանի միջոցով, 16 անճիւղներից հանգանակված՝ 13 բուրբլի. 4) Աստրախանցի, Ղահրաման Տէր-Գաբրիէլեանից՝ 3 բուրբլի: Ուրեմն նախկին 1909 բուրբլի 16 կօպէկի հետ այժմ ունենք 1936 բուրբլի 16 կօպէկ:

Պետերբուրգից, պ. Եղորդեան մեզ հեռագրում է յունվարի 27-ից հետեւեալ. «Լիազօրութիւն ստացած լինելով հանդիսականների կողմից, սըրտով շնորհաւորում եմ «Էլի մէկ դոհի» պատկառելի մեծարգոյ հեղինակին, նրա տաղանդաւոր պիէսի փայլուն աշողութեան առիթով:»

Բագուի քաղաքագլխի ընտրութեան մասին մեզ գրում են այնտեղից հետեւեալ. «Այսօր, յունվարի 25-ին, կայացաւ քաղաքագլխի ընտրութիւնը: Գուհարկիցին՝ պ. պ. Իրեցիկ, Վ. Աբրամովիչ և Գեօրգի: Առաջինը ստացաւ 32 սպիտակ 24 սև, երկրորդը 9 սպիտակ և 47 սև, իսկ երրորդը 19 սպիտակ և 37 սև: Այդպիսով քաղաքագլուխ ընտրվեց պ. Իրեցիկ: Մանրամասնութիւնները յաջորդ նամակով:»

«Новое Время» լրագիրը լսել է, որ շուտով Պետերբուրգում կը կայանայ այն նահանգների նահանգապետների և ադմուտականութեան պարագլուխների համագումար ժողովը, ուր մտադրութիւն կայ այս տարի մոյցնել գէմետովի գլխաւորների պաշտօնը:

Ալեքսանդրօպոլից, պ. Պետրոս Դրամիեան, ուղարկելով մեզ 10 ր. խնդրում է «Մշակի» մի օրինակ յատկացնել որ և է հայոց դպրոցին: Մենք «Մշակի» մի օրինակը պ. Դրամիեանի անունից, կուղարկենք Սախիբի հայոց ծխական դպրոցին: Աստրախանցի, պ. Ղահրաման Տէր-Գաբրիէլեանց, «Մշակի» մի օրինակը նուիրում է Սաքարեձօի հայոց ծխական դպրոցին:

Այս օրերս, մայրաքաղաքի լրագիրները խօսքերով, ուղերթիցին դէպի Պարիզ ուսուցչականները, որոնք պէտք է մասնակցեն յունվարի 26-ին Պարիզում կայացած միջազգային սանիտարական կօնֆերենցիային: Կօնֆերենցիան պէտք է միջոցներ մշակէ պաշտպանելու Եւրոպան Կարմիր ծովից և Պարսից ծոցից արշաւող խօլերայի դէմ:

Կրկին անգամ դիմում ենք այն անձանց, որոնք ուղարկում են նամակներ մեր խմբագրութեան հասցեով՝ զանազան անձանց յանձնելու համար, չուղարկել այդպիսի նամակներ, որովհետեւ մեր խմբագրութիւնը ոչ ժամանակ, ոչ հարաւորութիւն և ոչ էլ ցանկութիւն ունի մասնաւոր յանձնարարութիւններ կատարելու:

Հինգշաբթի, յունվարի 27-ին, ձեռնածու լէնց տուեց իր ներկայացումը բանկի թատրոնում: Լէնցը յայտնի է Թիֆլիսի հասարակութեանը որպէս մի շատ ճարպիկ ձեռնածու, որովհետեւ մի քանի անգամ նա եկել է Կովկաս: Այս անգամ էլ նա բաւական աշողութիւն ունեցաւ: Հասարակութիւնը մանաւանդ հաւանեց բեմի վրայից կնոջ անհետանալը:

Ստացանք Ե. Գոգերաշվիլիի «Нормальное ПИСЬМО» անունով գրքիցը, որ տպագրված է Թիֆլիսում այս 1894 թւին և արժէ 20 կօպէկ: Գրքը խօսում է գրութեան եղանակների մասին:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տիկին Սֆիա Ղոնիսեանցը, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Աստուածատուր Ղոնիսեանի, նուիրեց 100 բուրբլի Մարիամեան օրիորդաց ուսումնարանին, 100 բուրբլի Ղարաբաղի թիւական դպրոցին, 50 բուրբլի Էջմիածնին և 50-ական բուրբլի տեղիս Սեղրեցոյ եկեղեցուն, և 25 բուրբլի Երուսաղէմի, Գանձասարի և Ամարսի վանքերին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԻՐՈՏ

Հեռագիրը լուր բերեց հեշակաւոր վիրաբոյժ և կլինիկոս Բիլրօտի մահվան մասին:

Թէոօր Բիլրօտ ծնվել է 1829 թվի ապրիլի 26-ին Բէրլինում՝ Իրեքէն կղզու վրա: Հանգուցեալը իր միջնակարգ ուսումն առաւ Գրէֆաուդի դիմնադիւպում և ապա սկսեց բժշկականութիւն ուսումնասիրել Գրէֆաուդում, Գէտինգենում և Վիէննայում: 1855 թվին նա Լանգէնբէրկի ասիստէնտ նշանակվեց Բերլինի համալսարանի վիրաբուժական կլինիկայում, ուր հետեւեալ տարին նրան թոյլ տրվեց դասախօսութիւններ կարդալ: 1859 թ. նա հրաւիրվեց Յիւրիլի՝ որպէս վիրաբուժական պրօֆէսոր և վիրաբուժական կլինիկայի դիրեկտոր: 1867 թվին Բիլրօտ նոյն պաշտօնով Վիէննա հրաւիրվեց: Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ Բիլրօտ աշխատում էր գերմանական հիւանդանոցներում, Բէլնի վրա:

Բիլրօտ մեր ժամանակի ամենանշանաւոր վիրաբոյժ էր համարվում, բայց և զիստօղիւյի, ընդհանուր պաթոլոգիայի և մանաւանդ հիւանդանոցների կազմակերպութեան շրջանում նա յայտնի հռչակ ունի: Նա ունի բազմաթիւ գիտնական գրուածքներ, որոնցով նա առաջ է տարել վիրաբուժական բոլոր ճիւղերը: Բիլրօտի գիտնական աշխատութիւններին պէտք է աւելացնել և նրա աշակերտների անթիւ աշխատութիւնները, որոնք սկսված են և կատարված նրա նախաձեռնութեամբ և նրա ղեկավարութեամբ:

Բիլրօտ վաղուց, 1861 թվից, խմբագրեցի մէկն էր Լանգէնբէրկի հրատարակած «Archiv Für Klinische Chirurgie» գիտական թերթի:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պոլսից գրում են. «Կարնոյ կուսակալութեան ուղղեալ եպարքոսական հեռագիր մը հրահանգ տուած է՝ չհամոզներու ձեռքն արմարի չը թողուլ և երևան հանելով չափաւոր գնով մը վաճառել տալ զայն:»

«Խղմիրի պատժական ատենը ճիւղ տարուան բերբարեկութեան զատապարտած է Միլիտի Թալիք Զաքըճեան անուն անձը, ի բացակայութեան: Դատարանը հաստատած էր թէ այդ անձը խուճարարական նամակ մը գրած էր Ավալաբի մարտատան նախորդ պաշտօնակա Դանիէլ Էֆէն-

